ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. ՀՀ քաղաքացիություն.
2. բարձրագույն կրթություն.
3. հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արվեստի բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

Հիմնական գործունեության կազմակերպումը՝

1. Պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական նպատակը և առարկան մշակութային գործունեության իրականացումն է:

2. Կազմակերպությունը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, ապահովում է աշակերտների կողմից մշակութային ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը:

3. Կազմակերպությունն իրականացնում է համերգային գործունեություն ձեռնարկությունների, կազմակերպությունների և բնակչության համար:

Իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ (կից ներկայացվում է).
- բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմ(ները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը).
- երկու գունավոր լուսանկար՝ 3x4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային).
- անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը).
- ինքնակենսագրություն՝ (կից ներկայացվում է).

- գիտական աստիճանի վկայականը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում.
- աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ), որը կբավարարի սույն հայտարարությամբ սահմանված պահանջներին և հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ.
- օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում.
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման՝ դիմողի կողմից մշակված հայեցակարգը՝ էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացվի 2024 թվականի նոյեմբերի 12-ին:
- հայեցակարգը պետք է լինի առավելագույնը 20 էջ.
- պարունակի պետական կազմակերպության ոլորտի առկա խնդիրների համակարգային վերլուծությունը և գնահատումը.
- ներառի պետական կազմակերպության բնագավառի զարգացման և բարեփոխման առաջարկները.

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2024 թվականի նոյեմբերի 6-ին ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (հասցե՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2024 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (հասցե՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16):

Հիմնական աշխատավարձը՝ 254 375 (երկու հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 3-ը ներառյալ, տեղեկատու հեռախոս 0312-4-90-00-136, էլեկտրոնային փոստի հասցեն՝ *shirak.andznakazm@gmail.com* :

Մրցույթի թեստավորման փուլին նախապատրաստվելու համար թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ իրավական ակտերի շրջանակից՝

* Սահմանադրություն

Հոդվածներ՝ 1, 2, 4-6, 16, 20-23, 32, 33, 48-51, 55-57, 59-64, 68, 75, 83, 85, 86, 89, 124, 131, 147

Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

* ՀՀ աշխատանքային օրենսգիրք
Հոդվածներ՝ 3, 5, 14, 30, 45, 94, 95, 101, 103, 109, 111-113, 123, 132, 139-141, 146, 153, 159, 160, 164, 166, 167, 171, 174, 176, 219, 223, 244
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170577

* «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
Հոդվածներ՝ 3, 4, 6, 7, 9, 10-12, 14-16, 18, 22-24
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164932

*«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք,
Հոդվածներ՝ 1-3, 6, 8, 10, 14, 16, 17, 20-24, 26
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121002

Թեստային հարցերի ձևանմուշ

Մրցույթի հարցազրույցի փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ իրավական ակտերի և հմտությունների շրջանակն է՝

* Սահմանադրություն
Հոդվածներ՝ 1, 2, 4-6, 16, 20-23, 32, 33, 48-51, 55-57, 59-64, 68, 75, 83, 85, 86, 89, 124, 131, 147
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

* ՀՀ աշխատանքային օրենսգիրք
Հոդվածներ՝ 3, 5, 14, 30, 45, 94, 95, 101, 103, 109, 111-113, 123, 132, 139-141, 146, 153, 159, 160, 164, 166, 167, 171, 174, 176, 219, 223, 244
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170577

* «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
Հոդվածներ՝ 3, 4, 6, 7, 9, 10-12, 14-16, 18, 22-24
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164932

*«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք,
Հոդվածներ՝ 1-3, 6, 8, 10, 14, 16, 17, 20-24, 26
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121002

*Աշխատակազմի կառավարում
Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf

*Առաջնորդում
Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/2.pdf

*Ռազմավարական պլանավորում
Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/8.pdf

Որոշումների կայացում
Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf

Անձնական որակների՝ աշխատանքային էթիկայի և բարեվարքության կանոնների իմացություն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16), հեռախոսահամար՝ 0312-4-90-00-136:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի նոյեմբերի 18–ի N:625-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

(փոփ. կատարվել է 10.09.2024թ. N:404-Ա որոշմամբ)

Լուսանկար

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանին

(փոփ. կատարվել է 10.09.2024թ. N:404-Ա որոշմամբ)

.....
¹ÇÙáÕÇ ³ÝáõÝÁ, Ñ³Ùñ³ÝáõÝÁ, ³½·³ÝáõÝÁ

.....
¹ÇÙáÕÇ Ñ³ëó»ù

.....
(³ÝÓÝ³·ñÇ ë»ñÇ³Ý, Ñ³Ù³ñÁ, »ñµ ¨ áõ±Ù ïáÕÙÇó ¿ ïñí»É)

.....
(Էլ .փոստի հասցե,հեռ.
)

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու «_____

_____» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին:

(փոփ. կատարվել է 10.09.2024թ. N:404-Ա որոշմամբ)

Մրցութին մասնակցելու համար ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. Ինքնակենսագրություն ---------- էջ:
2. Անձնագիր, նույնականացման քարտ ----------էջ:
3. Գունավոր լուսանկար ------ հատ:
4. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) ---------էջ:
5. Օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) ---------էջ:
6. Գիտական աստիճանի վկայական ----------էջ:
7. Աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ) ------- էջ:

Սույնով հայտնումեմ, որ.

1) Չեմ դատապարտվել հանցագործության կատարման համար, սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն չունեմ.

2) օրենքի համաձայն չի արգելվել որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ չեմ զրկվել որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) նախորդ 3 տարվա ընթացքում չեմ եղել սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

_____

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին

Դիմող՝_____ « » _____202 թ.

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի նոյեմբերի 18–ի N:625-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՎՈՂ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

(փոփ. կատարվել է 10.09.2024թ. N:404-Ա որոշմամբ)

Լուսանկար

Ինքնակենսագրություն

Ազգանունը, անունը, հայրանունը	
Ծննդյան ամսաթիվը և տարին, ծննդավայրը	
Կրթությունը	
Մասնագիտությունը	
Որակավորումը	
Գիտական աստիճանը	
Գիտական կոչումը	
Ինչ օտար լեզուների է տիրապետում	
Մասնագիտական վերապատրաստում	
Զինապարտությունը, զինվորական կոչումը	
Անձնագրային տվյալներ (³ÝÓÝ³·ñÇ ë»ñÇ³Ý, Ñ³Ù³ñÁ, »ñµ ¨ áõ±Ù ÏáÕÙÇó ¿ ïñí»É)	

Հանրային ծառայության համարանիշ	
Հասցեն (հաշվառման, բնակության)	
Հեռախոսը (բնակարանի, բջջային, աշխատանքային)	
Ընտանեկան դրությունը	

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(սկիզբը) *(օր, ամիս, տարի)*	-	*(ավարտը)* *(օր, ամիս, տարի)*	*(հիմնարկի, կազմակերպության անվանումը, պաշտոնը)*
	-		
	-		
	-		
	-		
	-		
	-		
	-		

Հաստատված է
ՀՀ Շիրակի մարզպետ Ռ. Մանուկյան
_____
_____
04 21 2006 թ.

Գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի Ամասիայի տարածքային բաժնում:
Գրանցման թիվ 46210.00094
30 սեպտեմբերի 2006թ.
Վկայական 03-Ա 059406
Պետական ռեգիստրի տարածքային բաժնի պետ
Կ. Հովհ., Գ. Հովհաննիսյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2006թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական մշակութային կազմակերպությունը շահույթ սանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մշակութային ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է: Այն հանդիսանում է «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի /գրանցման համար 4621000084/1.08.03թ./ իրավահաջորդը:
2. Հաստատությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Հաստատության գտնվելու վայրը՝ ՀՀ, Շիրակի մարզ, Ամասիայի համայնք:
4. Հաստատությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք, իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Հաստատությունն ունի զինանշանով հայերեն, ռուսերեն անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ իր անվանվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադիր որոշմամբ:
8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մշակութային կազմակերպությունների հետ:
9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակը

1. Պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական նպատակը և առարկան մշակութային գործունեության իրականացումն է:
2. Կազմակերպությունը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, ապահովում է աշակերտների կողմից մշակութային ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը:
3. Կազմակերպությունը իրականացնում է համերգային գործունեություն ձեռնարկությունների, կազմակերպությունների և բնակչության համար:
4. Բնակչության վճարովի ծառայությունները կատարվում են գնացուցակներով նախատեսված գներով և տարիֆներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ պայմանագրային գներով:

III. Կազմակերպության ուսումնական գործունեության կազմակերպումը

1. Կազմակերպության աշակերտության համար ուսումնական տարին սկսվում է ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից և ավարտվում հաջորդ տարվա մայիսի 31-ին:
2. Ուսումնական աշխատանքները դպրոցն իրականացնում է ՀՀ Մշակույթի նախարարության կողմից հաստատված ուսումնական ծրագրերի և դասաժամերի համաձայն:
3. Դասի տևողությունը սահմանել համաձայն ՀՀ Մշակույթի նախարարության ուսումնական պլանի:
4. Սովորողների առաջադիմությունը գնահատվում է 10 միավորային ձևով:

1-3	*անբավարար*
4-6	*բավարար*
7-8	*լավ*
9-10	*գերազանց*

5. Ուստարին բաժանվում է 2 կիսամյակի:

1-ին կիսամյակ	*սեպտեմբերի 1-ից-դեկտեմբերի 25-ը*
2-րդ կիսամյակ	*հունվարի 15-ից- մայիսի31-ը:*

6. Ստուգարքները, փոխադրական և ավարտական քննությունները անցկացվում են ըստ անհրաժեշտության, առանց վերադաս մարմինների հետ համաձայնեցնելու, դպրոցի տնօրինությունը իրավասու է փոփոխել ավարտական քննությունների նպատակահարմար ժամկետները, սակայն ոչ ուշ, քան նոր ուստարվա սեպտեմբերի 30-ը:
7. Այլ վայրերից և դպրոցներից աշակերտների տեղափոխությունները իրականացվում են դպրոցի տնօրինության կողմից:
8. Աշակերտներին վերաստուգարք կամ վերաքննություն նշանակվում է հիվանդության պատճառով կամ անբավարար գնահատական ունենալու դեպքում: Վերաստուգարքների և վերաքննությունների համար նշանակվում է ժամկետ՝ մինչև նոր ուստարվա սեպտեմբերի 20-ը:
9. Հիվանդության կամ այլ հարգելի պատճառով ուսումնական ծրագրերը չանցած աշակերտները կարող են մնալ նույն դասարանում մանկավարժական խորհրդի որոշմամբ և տնօրենի հրամանից հետո:
10. Աշակերտներին բարձր դասարան կամ դպրոցի ներսում բաժնից բաժին տեղափոխումը, պատժելը կամ դպրոցից հեռացնելը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա:
11. Դպրոցում աշակերտների վարքը չի գնահատվում:
12. Դպրոցի շրջանավարտները ավարտական քննությունները համապատասխան ծրագրերով հանձնելու դեպքում ստանում են ավարտական վկայականներ:
13. Հիվանդության կամ այլ հարգելի պատճառով ավարտական քննություններին չմասնակցելու դեպքում վերջին երկու տարվա առաջադիմության ամփոփիչ գնահատականների ցուցանիշներով շրջանավարտները կարող են ստանալ ավարտական վկայականներ:
14. Դպրոցում գործում են հետևյալ բաժինները՝

ա/ դաշնամուրայի

բ/ ասեղնագործության

գ/ նկարչության

դ/ ժողգործիքների

ե/ պարարվեստի

զ/ սամնքի

Բոլոր բաժիններում դասավանդվում են երաժշտական տեսական առարկաներ:

15. Նոր բաժիններ դպրոցում բացվում են ըստ բնակչության ցանկության, դպրոցի տնօրինության կողմից մասնագետ մանկավարժների և այլ անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:
16. Դպրոցում սովորողների համար սահմանել յոթամյա, հնգամյա և քառամյա կրթության ժամանակահատվածներ:
17. Դպրոցի առաջին դասարան ընդունելությունը իրականացնելու համար դպրոցի տնօրինությունը ստեղծում է քննական հանձնաժողով, որը իրական ուժ է ստանում տնօրենի կողմից հրամանագրվելուց հետո:
18. Ընդունող հանձնաժողովի նախագահն է հանդիսանում դպրոցի տնօրենը:
19. Դպրոցի առաջին դասարան կարող են ընդունվել 7-11 տարեկան երեխաները:
20. Առանձին դեպքերում ընդունող հանձնաժողովը իրավասու է կատարելու անհրաժեշտ ընտրություն՝ առանց տարիքային սահմանափակման:
21. Ընդունելության հանձնաժողովի արձանագրությունների հիման վրա մրցույթով անցած բոլոր աշակերտները համարվում են ընդունված դպրոց, որոնք հրամանագրվում են ըստ ցուցակի՝ դպրոցի տնօրենի կողմից:

IV. Հաստատության կառավարումը

1. Հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:
2. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
3. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
   ա/ հաստատության հիմանդրումը ,
   բ/ հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
   գ/ հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը,
   դ/ հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

ե/ հաստատության կառավարման համակարգի սահմանումը,

զ/ հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,

է/ հաստատության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ը/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

4. Լիազորված պետական մարմինը.

ա/ հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ/ վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ,

գ/ լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

դ/ վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ,

ե/ լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

զ/ հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

է/ իրականացնում է օրենքով, հիմնադիր որոշումներով և հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

5. Հաստատության տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենը օրենքով, հիմնադիր և լիազորված պետական մարմնի որոշումներով սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադիր կամ լիազորված պետական մարմնի որոշումների սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6. Տնօրենը՝

ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

բ/ մասնակցում է հաստատության խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադիր և լազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

դ/ տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

ե/ աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

զ/ բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

է/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ը/ ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

թ/ Տնօրենի բացակայության դեպքում, նրա նշանակված մարմնի գրավոր որոշման /հրամանի/ համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ,

ժ/ կազմակերպության գործունեության հիմնական հարցերի քննարկման և կազմակերպչական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով տնօրենին առընթեր ստեղծվում է Մանկխորհ:

ա/ Մանկխորհի մեջ ի պաշտոնե մտնում է կազմակերպության տնօրենը և մանկավարժները: Մանկխորհի կազմը հաստատում է տնօրենը:

Մանկխորհը իր լիազորությունների սահմաններում քննարկում է կազմակերպության գործունեությանն առնչվող հարցեր, հաստատում է կազմակերպության գործունեության տնտեսական և ընթացիկ ծրագրերն ու դրանց կատարման հաշվետվությունները:

բ/ Ծնողական միջոցներից ստացած ամենամյա վարձերը տնօրինվում են դպրոցի տնօրենի կողմից՝ համաձայնեցնելով մանկավարժական խորհրդի անդամների հետ:

V. Հաստատության սեփականությունը, նաեւ ամրացված գույքը եւ ֆինանսատնտեսական գործունեությունը

1. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադիր որոշումների և կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
2. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
3. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
4. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
5. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
6. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները:
7. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային, աշակերտների վարձերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

8. Պետական ոչ առևտրային կազմակերպության մշակութային գործունեությանը ֆինանսավորում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա/ բարեգործական, նպատակային ներդրումները, ՀՀ և օտարերկրյա կանոնադրական խնդիրների ու գաղափարների նվիրատվությունները,

բ/ ՀՀ օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի /վերստուգման/՝ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտի կամ Հայաստանի Հանրապետության Կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

VI. Աշխատանքը եւ սոցիալական ապահովվածությունը

1. Սոցիալական զարգացման հարցերը, այդ թվում՝ աշխատանքային պայմանների և կենցաղի, կյանքի և առողջության, աշխատանքային անվտանգության, բնակարանային պայմանների բարելավման խնդիրները կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրական պահանջներով:

VII. Հաստատության վերակազմակերպումը եւ լուծարումը

1. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: